«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ
ԵՎ ՄԱՐՄՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՌԵԿՏՈՐԻ Ժ.Պ. ՊՐՈՖԵՍՈՐ՝ Դ.Մ. ԽԻԹԱՐՅԱՆ

29 նոյեմբերի 2019

Առաջատար կազմակերպության կարծիք

Զարուհի Վարդանի Հարությունյանի «Էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը ներառական կրթություն իրականացնող դպրոցում» թեմայով ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» (Հատուկ մանկավարժություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ներառական կրթության համընդհանուր նպատակը կրթական համակարգում բարեփոխումների, մոտեցումների, մեթոդների և ռազմավարության մշակումն է և դասավանդման տարբեր ոճերի ներդրումը՝ ի պատասխան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական պահանջների: Նման ռազմավարության ներդրումը, նախևառաջ, պահանջում է բազմամասնագիտական թիմի համակարգված մոտեցումների կիրառում և ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքների և առանձնահատկությունների ուսումնասիրում:

Էրգոթերապևտիկ միջամտության նկատմամբ ներկայիս հետաքրքրությունը ներառական կրթություն իրականացնող դպրոցներում պայմանավորված է սովորողների սոցիալական վերականգնմանն ուղղված էրգոթերապևտիկ համալիր մոտեցումների կարևորությամբ: Անհերքելի է վերոհիշյալ դպրոցներում աշխատող բազմամասնագիտական թիմի մասնագետների և ուսուցիչների դերը, ովքեր համակարգում են կրթական կարիք ունեցող սովորողների ուսուցման գործընթացը՝ այս կերպ որոշելով նրանց սոցիալականացման դրական արդյունքները: Այս առումով պետք է կարևորել այնպիսի միջամտության իրականացումը, ինչը թույլ է տալիս ներառական կրթություն իրականացնող դպրոցներում կիրառել էրգոթերապևտիկ համալիր մոտեցումներ և կրթական կարիքի հաղթահարման համապատասխան միջոցներ (J. Benson 2013, AOTA 2016):

Պետք է նշել, որ, չնայած, ՀՀ-ում ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների ինտեգրումը և ուսուցումը

կազմակերպվում են հատուկ ուղղվածությամբ, սակայն այդ գործընթացը լիովին չի համապատասխանում սոցիալական վերականգնմանն ուղղված համապատասխան մեթոդների կիրառմանը (Մ.Հարությունյան 2011, Գ. Հովյան 2013, Զ. Հարությունյան 2016):

Մինչ այժմ ՀՀ-ում իրականացված Էրգոթերապևտիկ միջամտության գիտական հետազոտությունները ուղղված են եղել միայն մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների ինքնասպասարկման և կենցաղավարության հմտությունների հետազոտմանը և համապատասխան էրգոթերապևտիկ միջամտության ուղիների զարգացանը (Մ. Հարությունյան 2013): ՈՒստի, գոյություն ունեցող խնդրի լուծման համար, Զ. Հարությունյանի կողմից առաջարկվող էրգոթերապևտիկ միջամտության մոդելը իրենից ներկայացնում է ԿԱՊԿՈՒ երեխաների հոգեբանական, անձնային և ֆիզիկական առանձնահատկությունների ուսումնասիրման և հաշվառման համալիր ծրագիր, որը թույլ է տալիս հայտնաբերել, գնահատել և համակարգել էրգոթերապևտիկ միջամտության կիրառման և ներդրման առավել արդյունավետ ուղիներ և մոտեցումներ՝ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում:

Էրգոթերապևտիկ միջամտությունը, որը ներառական կրթություն իրականացնող դպրոցներում ուղղված է ԿԱՊԿՈՒ երեխաներին կրթական գործընթաց ներգրավելուն, նպաստում է կրթական առանձնահատուկ խնդիրների հաղթահարմանը, այս երեխաների ուսուցման և դաստիարակության բազմակի կարիքների բավարարմանը՝ ներգրավելով նրանց սոցիալական միջավայր և ընդլայնելով նրանց սոցիալական շփումը:

Ատենախոսի կողմից առաջարկվող բացառիկ նոր մոտեցումը՝ էրգոթերապևտիկ միջամտությունը պահանջում է հատուկ մասնագետների սերտ համագործակցություն և խորհրդատվություն՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու առավել նպաստավոր և սոցիալական միջավայրում հարմարվելու ուղիներ մշակելու համար (М. Арутюнян, Г. Овян 2017, Զ. Հարությունյան 2018):

Հետազոտության արդիականությունը սահմանվում է նաև նրանով, որ խնդրո առարկայի վերաբերյալ կան տեսական և գործնական մի շարք բացթողումներ, թերի, չլուսաբանված կողմեր. մասնավորապես՝ էրգոթերապևտիկ տեսանկյունից գնահատված չեն ԿԱՊԿՈՒ սովորողների անհատական կարողությունները կրթական գործընթացում ինքնուրույն մասնակցություն ունենալու տեսանկյունից իսկ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում չեն կիրառվում այդ կարողությունների զարգացման էրգոթերապևտիկ արդյունավետ մեթոդներ՝ կրթական կարիքի գնահատման համակարգման գործընթացում: Գնահատված չեն ներառական կրթություն իրականացնող դպրոցներում առկա միջավայրի անհրաժեշտ պայմանները, դասավանդման մեթոդների համապատասխանությունը

ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական կարիքներին, որոնք կնպաստեն նրանց լիարժեք ինտեգրմանը ուսումնական գործընթաց:

Մինչ այժմ չկան մշակված՝ կրթության առանձնահատուկ խնդիրների և սովորողների ուսուցման, դաստիարակության բազմակի կարիքների հաղթահարման համալիր էրգոթերապևտիկ ծրագրեր, կրթական գործընթացի և սոցիալական հարմարվողականության զարգացման առավել արդյունավետ միջոցներ, մեթոդներ:

Ելնելով հիմնախնդրի արդիականությունից, կոնկրետ նպատակից, հետազոտության վարկածից, գիտական նորույթից, տեսական և գործնական նշանակությունից կարելի է հաստատել, որ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող երեխաների համար առկա միջավայրային անհրաժեշտ պայմանների և դասավանդման մեթոդների անհամապատասխանության հեղինակի հիմնավորումը թույլ է տալիս ոլորտում վեր հանել և լուծել մի շարք խնդիրներ: Դրանց են վերաբերվում՝ զբաղվածության կատարողականության, սովորողների ուսուցման և դաստիարակության, բազմակի կարիքների հաղթահարման համալիր էրգոթերապևտիկ ծրագրի կիրառման, կրթական գործընթացի և սոցիալական հարմարվողականության զարգացման առավել արդյունավետ միջոցների, մեթոդների ընտրության հարցերը: Հայցորդը համալրել է էրգոթերապևտիկ տեսական փորձը նոր գիտահետազոտական փաստերով: Ինչ վերաբերվում է էրգոթերապևտիկ ծրագրի միջոցով հեղինակի կողմից ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանն միջոցառումներին՝ տեղաշարժման, մանր մոտորիկայի հմտությունների, տարածության մեջ կողմնորոշման, էրգոթերապևտիկ ուղղվածությամբ խաղերի կազմակերպման, ապա պետք է հավաստել, որ կատարված է արժեքավոր և բազմաժավալ աշխատանք, ինչը մեկ անգամ ևս ընդգծում է սույն ատենախոսության անհերքելի գործնական նշանակությունը:

Այս համատեքստում մենք կարևորում ենք նաև «զգայական սենյակի» ստեղծումը, ինչը ևս էրգոթերապևտիկ միջամտության գործնական կիրառում է՝ ուշադրության կենտրոնացման և գերակտիվության խնդրի կարգավորման առումով:

Վերոնշվածով պայմանավորված կարելի է եզրակացնել, որ Զարուհի Վարդանի Հարությունյանի «Էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը ներառական կրթություն իրականացնող դպրոցում» թեմայով ներկայացված ատենախոսական աշխատանքն առանձնանում է թե տեսական, թե գործնական և թե սոցիալական նշանակության տեսանկյունից:

Ատենախոսությունը շարադրված է 166 էջ համակարգչային տեքստով, կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից հավելվածից: Ատենախոսության տեքստը պարունակում է 10 աղյուսակ, 23 տրամագիր, 1 գծապատկեր, 2 նկար և 7 հավելված:

Մեր համոզմամբ, ԿԱՊԿՈՒ երեխաների ամբողջական ներառական կրթության միտումն, այսօր, ենթադրում է նոր միջոցների, մեթոդների մշակում և դրանց կիրառման համապատասխան պայմաններ, ինչն իր աշխատանքով կարողացել է ապացուցել Զ.Հարությունյանը, իսկ հատուկ մշակված մանկավարժական պայմաններն ու էրգոթերապևտիկ մոտեցումները հնարավորություն են ընձեռել կազմակերպել ԿԱՊԿՈՒ երեխաների արդյունավետ ուսուցման ուղիներ՝ աջակցելով վերջիններիս կրթական գործընթացի կայացմանը յուրաքանչյուր փուլում:

Ամբողջապես դրական գնահատելով Զարուհի Վարդանի Հարությունյանի «Էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը ներառական կրթություն իրականացնող դպրոցում» թեմայով ներկայացված եզակի ատենախոսական աշխատանքն, այնուամենայնիվ հարկ ենք համարում առանձնացնել հետևյալ դիտարկումներն ու նկատառումները.

1. Նպատակահարման էր էրգոթերապևտիկ միջամտությունների փորձարարական գործընթացը կազմակերպել՝ հենաշարժողական ապարատ, առտիզմ, կամ գերակտիվության համախտանիշ ԿԱՊԿՈՒ երեխաների երեքից միայն մեկ խմբում: Դա թույլ կտար ավելի խորը և մանրակրկիտ բացահայտել մշակված մոդելի ներգործության առավելությունը և թերի կողմերը:
2. Հետազոտությունն ավելի արժեքավոր կլիներ, եթե կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողին տրամադրվող ծառայություններում էրգոթերապևտիկ միջամտության ժամանակահատվածը, տևողությունը, ծավալը և գրաֆիկը մշակվեր հաստատության աջակցության խմբի կողմից՝ ֆիզիկական թերապիստ, կինեզիոթերապիստ, արտթերապիստ մասնակությամբ:
3. Գիտափորձի արդյունքների հավաստի մեկնաբանելու համար անհրաժեշտ էր 7-9 աղյուսակներում ներկայացնել նաև փորձարարական խմբի դպրոցականների ցուցանիշները փոփոխության ողջ գործընթացը՝ գիտափորձից առաջ և հետո:
4. Հայցորդը գրավոր աշխատանքներում փորձարարական խմբի հաջողությանը ներկայացրել է 54.1%, մինչդեռ, դա վերաբերում է միայն հենաշարժողական համակարգի խնդիրներով դպրոցականներին: Միջինացված տվյալները վկայում են, որ երեխաների ընդհանուր 32%- է ինքնուրույն կատարում առաջադրված գործողությունները (էջ. 130-131):
5. Աղյուսակ 7-ում (էջ 131) բացակայում է հետազոտվող արդյունքների երեք կարգը (ինքնուրույն, օգնությամբ, չի կարողանում) նշող տողը, իսկ նույն

աղյուսակի 130 էջի հատվածում, հետազոտվողների երկրորդ խմբի ցուցանիշներում տեղ չի գտել գիտափորձից հետո արձանագրված տվյալները:

6. Պարզաբանման կարիք ունի նաև զրավոր հմտությունների շարքում «ուշադրության կենտրոնացում» հատկության ներառումը (տրամագիր 11 (էջ 87), աղյուսակ 7 (էջ 130):

Նշված նկատառումները, սակայն, չեն իջեցնում ատենախոսական աշխատանքի իրական արժեքը: Այն ինքնուրույն, ավարտուն և գիտական աշխատանք է, որն առանձնանում է իր արդիականությամբ, գիտական նորույթով, տեսական և գործնական նշանակությամբ: Կարելի է հավաստել, որ ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները լրացնում են հատուկ մանկավարժության առաջավոր փորձը գիտահետազոտական նոր փաստերով:

Սեղմագրում ներկայացված են ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Զարուհի Վարդանի Հարությունյանի «Էրգոթերապևտիկ միջամտության մոդելավորումը ներառական կրթություն իրականացնող դպրոցում» թեմայով թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, տարբերվում է իր նորույթով, տեսական, գործնական և սոցիալական նշանակությամբ: Այն համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» (Հատուկ մանկավարժություն) մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսը լիովին արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի պրոֆ. Ա.Ա.Լալայանի անվ. Սպորտի մանկավարժության և հոգեբանության, Կինեզիոլոգիայի, Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և անատոմիայի ամբիոնների 28.11.19թ.-ի (արձանագրություն թիվ 4) համատեղ նիստում:

Նիստին մասնակցել են՝ հ.գ.թ, պրոֆ. Հ.Ա. Բաբայանը, մ.գ.դ., պրոֆ. Ա.Ս.Չատինյանը, մ.գ.թ., պրոֆեսոր Ա.Ս. Մարտիրոսյանը, մ.գ.թ., պրոֆեսոր Ս.Հ. Հովեյանը, հ.գ.թ. դոցենտ Ա.Գ. Ստեփանյանը, հ.գ.թ., դոցենտ Վ.Ղ. Գեղամյանը, կ.գ.թ., դոցենտ Տ.Ռ. Պետրոսյանը, բ.գ.թ., դոցենտ Լ.Գ. Խաչատրյանը, մ.գ.թ., դոցենտ Գ.Լ. Նայբանդյանը, մ.գ.թ., դոցենտ Ա.Հ. Պատվականյանը, դոցենտ Թ. Շ. Սոֆյանը,

ասիստենտ, հ.գ.թ. Ն.Է.Գևորգյանը, մ.գ.թ., ասիստենտ Ա.Ս.Դավթյանը, Ս.Ս. Արզաքանյանը, հոգեբանության լաբորատորիայի վարիչ Վ.Ա. Աբգարյանը:

Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., պրոֆեսոր՝ Հ.Ա. Բաբայան

Կինեզիոլոգիայի ամբիոն վարիչ, մ.գ.թ., պրոֆեսոր՝ Ա.Ս. Մարտիրոսյան

Ադապտիվ ֆիզիկական մ.գ.թ կուլտուրայի և անատոմիայի ամբոնի վարիչ, պրոֆեսոր՝ Ս.Հ. Հովեյան

Հաստատում եմ պրոֆեսոր
Հ.Ա. Բաբայանի, Ա.Ս. Մարտիրոսյանի,
Ս.Հ. Հովեյանի ստորագրությունները

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի
և սպորտի պետական ինստիտուտի
գիտ. քարտուղար, դոցենտ՝ Մ.Ռ. Աաատրյան